ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Վ. ՋԻԼԱՎՅԱՆ

« 05 » 06 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000041

Ձեռնարկողը՝ ***«ԱՏԼԱՆՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ***
Ք. Երևան, Ա. Մանուկյան 10/12

Գործունեությունը՝ ***Կենտրոն վարչական շրջանի Ռոստոմի 26, 26/1, 26.2, 26/3, 26/4, 32/1, 32/3, 32/4, 32/6, 32/7 և Նար-Դոսի 53/2 հասցեներում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000041

<05> 06 2020թ.

Կենտրոն վարչական շրջանի Ռոստոմի փող. 26, 26/1, 26.2, 26/3, 26/4, 32/1, 32/3, 32/4, 32/6, 32/7 և Նար-Դոսի փող. 53/2 հասցեներում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝ «ԱՏԼԱՆՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/

Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ռոստոմի փող. 26, 26/1, 26.2, 26/3, 26/4, 32/1, 32/3, 32/4, 32/6, 32/7 և Նար-Դոսի փող. 53/2 հասցեներում «ԱՏԼԱՆՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ համալիր: Գործունեության համար նախատեսվող տարածքը գտնվում է Նար-Դոսի և Ռոստոմի փողոցների խաչմերուկում, անմիջապես փողոցներին հարող հատվածում՝ բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ: Համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված քանդման թույլտվությունների՝ իրականացվել են տարածքում առկա շենք-շինությունների քանդման աշխատանքներ, տարածքը մաքրվել է շինարարական աղբից:

Նկարագրական մաս. բազմաֆունկցիոնալ համալիրի նախագծման համար Երևանի քաղաքապետարանի կողմից տրվել է N 01/18-07/2-0-104357-1249 առ. 06.12.2019թ. նախագծման թույլտվությունը (ճարտարապետա-հատակագծային առաջադրանք): Համաձայն նախագծի՝ բազմաֆունկցիոնալ համալիրը ձևավորվելու է 0.360635հա հողամասի սահմաններում, որը սեփականության իրավունքով պատկանում է Ընկերությանը: Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի և խառը կառուցապատման: Հատկացվող հողամասում կառուցապատման համար նախատեսված տարածքի մակերեսը կազմում է 2786.2 մ^2, իսկ կանաչապատմանը՝ հողամասի մոտ 40%-ը:

Տարածքն ունի փողոցի անկմանը զուգահեռ թեքություն, որի վերին և ստորին ուղղաձիգ նիշերի տարբերությունը կազմում է մոտ 6 մետր: Ստորգետնյա գրունտային ջրերը տեղամասում բացակայում են: Շրջանի և տեղամասի սեյսմիկ ֆոնային արժեքը 9 բալ է (0.4g): Նախագծված համալիրը կազմված է «Ա», «Բ» և «Գ» մասնաշենքերից, որոնցից «Ա», «Բ» մասնաշենքերն ունեն 4 ստորգետնյա և 15 վերգետնյա հարկեր, իսկ «Գ» մասնաշենքն ունի միայն 4 ստորգետնյա հարկ, որոնք ծառայում են որպես ավտոկանգառ և միաժամանակ, ստորգետնյա հարկերի մակարդակում, և կապում են 2 բարձրահարկ մասնաշենքերը:

Առաջին հարկի հատակի հարդարման՝ ±0.000 նիշը համապատասխանում է +983.860 բացարձակ նիշին:

«Ա», «Բ» մասնաշենքերի ստորին վերգետնյա հարկերը ծառայելու են հասարակական օգտագործման նպատակով, իսկ 3-15 հարկերը նախատեսված են որպես բնակելի: Յուրաքանչյուր հարկում նախատեսված է 12-19 բնակարան, ընդհանուր՝ 232 քանակով: Բազմաֆունկցիոնալ համալիրում ընդհանուր ավտոկայանատեղիների քանակը կազմում է 150 հատ: Նար-Դոս փողոցի ստորգետնյա հարկերից մեքենաների ելքն ապահովելու համար նախատեսվում է կառուցել 1 թեքուղի: Արտաքին պատերը նախատեսվում է իրականացնել մեկ շարք՝ 200 մմ հաստությամբ ամրանավորված պեմզաբլոկներով, արտաքին կողմից՝ 100մմ հաստությամբ հանքաբամբակ ջերմամեկուսիչ սալերով, իսկ երեսապատումն իրականացվելու է 40 մմ հաստությամբ տրավերտինե սալերով:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողամասի մակերես՝ 3606.35 մ^2,
- կանաչապատման մակերես՝ 1432մ^2 /ներառյալ տանիքի կանաչապատումը/,
- կառուցապատման մակերես՝ «Ա» և «Բ» մասնաշենքերի համար՝ 2006.0 քմ, իսկ ստորգետնյա «Գ» մասնաշենքի համար՝ 780.2 քմ,
- ավտոկայանատեղիների քանակ՝ 150 հատ:

Բազմաֆունկցիոնալ համալիրի ջրամատակարարումն ու ջրահեռացումը իրականացվելու է համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայմանի: Ջրամատակարարումն իրականացվելու է քաղաքային ջրատարից՝ կառուցելով պոմպային կայան՝ ե/բ պահուստային բաքով: Տաք ջրամատակարարումն իրականացվելու է բնակարաններում նախատեսված կաթսաներից: Համալիրի գազմատակարարման համար կառուցապատողը դիմել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը՝ համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

Կենցաղային կեղտաջրերը հեռանում են բակային ցանց, իսկ այնտեղից՝ կոյուղու քաղաքային կոլեկտոր: Ավտոկայանատեղերի լվացման, հալոցքի և հրդեհամարումից հավաքված ջրերի հեռացման համար նախատեսված են հոսակներ և ջրհավաք առվակներ, որտեղից ջրերը կհեռանան կուտակիչ հոր, այնուհետև պոմպերով կմղվեն քաղաքային կոլեկտոր:

Համալիրի էլեկտրամատակարարման համար կառուցվելու է ենթակայան, որի սնուցումը կիրականացվի «Նար Դոս» 35/6 ենթակայանից:

Շինարարական փուլի ընդհանուր տևողությունը հաշվարկվել է 34 ամիս: Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը: Ե/բ հիմքերի տեղադրման հողային աշխատանքների ժամանակ հողային զանգվածի հանույթի ծավալը ընդհանուր կկազմի 30000մ^3, որից հետլիցքի ծավալը՝ 5000մ^3: Մնացորդային ծավալները սահմանված կարգով կտեղադրվեն համապատասխան աղբավայրում՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված: Շինարարության ժամանակ ջուրն օգտագործվելու է տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավեցման և շինանձնակազմի խմելու-կենցաղային կարիքների համար: Տեխնիկական ջրօգտագործումը ընդհանուր կկազմի 4.6մ^3/օր, իսկ խմելու համար ջրածախսը՝ 3.91մ^3/օր: Շինարարության փուլի ջրամատակարարումն իրականացվելու է գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լցակայանումը և յուղումը նախատեսված է իրականացնել շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված N01/18-U-16762-2-20.01.2020թ. շինարարական թույլտվության համաձայն, տարածքում իրականացվելու են հողային աշխատանքներ, որի ժամանակ 750քմ մակերեսում առաջացած 150մ^3 ծավալով բուսահողը

շինարարի կողմից պահեստավորվել է պաշտպանիչ միջոցառումներով՝ հետագայում կանաչապատման աշխատանքներում օգտագործելու նպատակով:

Նոր կառուցվող բնակելի համալիրի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու նպատակով հայտում ներկայացվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր: Մթնոլորտային օդի պահպանության նպատակով նախատեսված է՝

- պարբերաբար իրականացնել ջրցան /օրական՝ 2-3 անգամ/, ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը՝ իրականացնելով կարգավորում,
- շինարարական նյութերի (ավազ, խիճ, հողային զանգված և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,
- ցանցերի օգտագործում, որով կկանխարգելվի փոշու տարածումը,
-շինհրապարակում սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով:

Շրջակա տարածքների պահպանության և վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքերը կանխարգելելու նպատակով շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները նախատեսված են տեղադրել բետոնապատ մակերեսի վրա: Այն տարածքներում, որտեղ կայանելու են շինարարական տեխնիկան և տեխնիկական միջոցները, նախատեսված է պատել ավազով, կամ մանրախճով, անհրաժեշտության դեպքում փռված ավազը կամ մանրախիճը փոխարինել նորով:

Շինարարության ընթացքում հոսքաջրերի և անձրևաջրերի հեռացման համար շինհրապարակին կից նախատեսված է պարզարան, որտեղ հոսքաջրերը կենթարկվեն մեխանիկական նստեցման, որից հետո պարզեցված ջուրը կրկին կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ առաջացած նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող հիմնական թափոնատեսակները կլինեն կենցաղային աղբը, շինարարական աղբը, ավելցուկային հողային զանգվածը, որոնք սահմանված կարգով կտեղադրվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայրեր:

Շինարարության ընթացում հարակից տարածքների համար աղմուկի հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված է շինարարական աշխատանքների և տրանսպորտային երթևեկության կազմակերպում ցերեկային ժամերին, աղմուկ առաջացնող մեքենաների և սարքավորումների օգտագործումից խուսափում, խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգում և կարգաբերման իրականացում:

Որպես սոցիալական հնարավոր ազդեցությունների մեղմման միջոցառումներ՝ նախատեսված է նաև շինհրապարակի հարևանությամբ ցուցանակների տեղադրում, ժամանակավոր անցուղիների նախատեսում, երթևեկության կանոնակարգում, հարակից տարածքների բնակչության իրազեկում՝ շինարարական աշխատանքների մասին և այլն:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը պետք է բարեկարգվի և կանաչապատվի: Կանաչապատման համար կօգտագործվի հողային աշխատանքներին ժամանակ պահեստավորված բուսահողը, իսկ պահանջվող բուսահողի ծավալը պետք է լրացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կանաչապատումն իրականացվելու է տարածքի համար մշակված ընդհանրագման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն, որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատումը ներառում է սիզամարգի ստեղծում,

ծառատունկ, ծաղկանոց և այլն: Կանաչապատ տարածքների ոռոգումը նախատեսված է իրականացնել ոռոգման ցանցի միջոցով, որին միացումը կիրականացվի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից՝ պայմանագրի համաձայն: Ծառատեսակների ոռոգումը նախատեսված է կաթիլային ոռոգման համակարգով:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /մթնոլորտային օդի և հողի աղտոտվածություն, աղմուկ, թրթռում/: Հայտում ներկայացվել է մշտադիտարկումների իրականացման ժամանակացույցերի և ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն /ողջ շինարարության ընթացքում ծախսերը կկազմեն 1050 հազ. դրամ/:

Պարճառաբանական մաս. նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացավ հավանության: Փորձաքննության ընթացքում հաշվի է առնվել նաև Երևանի քաղաքապետարանի կարծիքը:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք շինարար կապալառուի կողմից կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական մեղմացնող միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատումն իրականացնել քաղաքաշինական նորմերին համապատասխան՝ պահպանելով պահանջվող հեռավորությունները:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
- Կանաչապատման աշխատանքներն իրականացնել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքներին և լուծումներին համապատասխան:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՏԼԱՆՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Կենտրոն վարչական շրջանի Ռոստոմի փող. 26, 26/1, 26.2, 26/3, 26/4, 32/1, 32/3, 32/4, 32/6, 32/7 և Նար-Դոսի փող. 53/2 հասցեներում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պահպանման պայմանով:

Մասնագետ Հ. Մկրտչյան